ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2018 Թ. <<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԵՎ <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

VIII ԴԱՍԱՐԱՆ



Երևան 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
1. Վիճակագրություն 4
1.1 Ընդհանուր տեղեկություններ 4
1.2 Թեստերի որակական բնութագրիչները 5
1.3 Մասնակցությունը ազգային ստուգատեսին 6
1.4 Առաջադիմությունը ըստ առարկաների 6
1.5 Ստուգատեսի արդյունքները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների 7
1.6 Ստուգատեսի արդյունքները ըստ բնակավայրի տիպերի 12
1.7 Ստուգատեսի արդյունքները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 13
Ա. Ամենաբարձր միջին արդյունք ցուցաբերած դպրոցների լավագույն տասնյակները 15
1.8 Ստուգատեսի արդյունքները ըստ սեռերի 16
2. Աշակերտների որոշ ունակություններ հայոց լեզվից 17
2.1 Կոռահում 17
2.2 Ճիշտ խոսքի հմտություն 26
2.3 Քերականական իմացություն 28
3. Հարցաթերթի վերլուծություն 30
3.1 Ընտանիքի անդամների թվով պայմանավորված սովորողների առաջադիմությունը 30
3.2 Սովորողների նախասիրությունների ազդեցությունը առաջադիմության վրա 31
Ա. Ամենասիրած հանրակրթական առարկան 31
Բ. Աշակերտների ապագա մասնագիտական կողմնորոշվածությունը 33
3.3 Օգտակար տեղեկությունների հիմնական աղբյուրները 35
Ըստ բնակավայրի տիպերի 36
3.4 Համակարգչային տեղեկատվական միջոցների նպատակային կիրառման և դրանց հատկացվող ժամերի ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա 38
Ա Տնային առաջադրանքների կատարում 41
Բ. Ֆիլմերի դիտում 41
Գ. Գիտահանրամատչելի նյութերի ընթերցում 42
Դ. Խաղեր 43
3.5 Աշակերտների կարդացած գեղարվեստական գրքերը 44

Ըստ աշակերտների սեռերի 46
3.6 Աշակերտների կարդացած պատմական վեպերը 47
3.7 Հայոց լեզվի բաժինների իմացության աշակերտների ինքնագնահատումը 48
3.8 Հայոց պատմության բաժինների իմացության աշակերտների ինքնագնահատումը 49
4. Որոշ գործոնների վերլուծություն 50
4.1 Հայոց լեզուն և հայ գրականությունը դպրոցում 50
4.2 Հայոց պատմությունը դպրոցում 51
Եզրակացություն 53
Գրականություն 55
Հավելված 1 56
Հավելված 2 58

Ներածություն

Հիմք ընդունելով ՀՀ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2018 թվականի մարտի 7-ի հրամանը՝ սույն թվականի մարտ-մայիս ամիսների ընթացքում հայագիտական առարկաներից («Հայոց լեզու և հայ գրականություն» և «Հայոց պատմություն») իրականացվել է ազգային ստուգատես՝ ՀԱԱՍ 2018, որին մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական 106 ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում սովորող 3124 աշակերտ:

Աշակերտները լրացրել են երեք մասից բաղկացած գրքույկ, որի 1-ին և 2-րդ մասերը ներկայացնում են «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաներից թեստային առաջադրանքներ, իսկ գրքույկի 3-րդ մասում ներկայացված է աշակերտի հարցաթերթ, որի նպատակն է պատասխանների վերլուծության միջոցով պարզել 8-րդ դասարանում սովորողների զբաղմունքները, նախասիրությունները, դպրոցի, դասավանդող ուսուցիչների, ինչպես նաև իրենց դպրոցում վերոնշյալ առարկաների դասավանդման վերաբերյալ աշակերտների կարծիքները և ուսումնասիրել դրանցով պայմանավորված տարբեր գործոնների ազդեցությունները ստուգատեսի ժամանակ աշակերտների ցուցաբերած առաջադիմության ցուցանիշների վրա:

Վերլուծությունն իրականացվել է Excel, Access, IATA և SPSS ծրագրային փաթեթների կիրառմամբ: Ազգային ստուգատեսի արդյունքների և հարցաթերթի պատասխանների վերլուծությունը կատարվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

- **ընդհանուր,** որտեղ ներկայացվել են ստուգատեսին մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում սովորողների շրջանում անցկացված ազգային ստուգատեսի ընդհանուր արդյունքները,
- **առարկայական**, որտեղ ներկայացվել է առաջադրանքների պատասխանների քանակական և տոկոսային պատկերը, ինչպես նաև թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծությունն ըստ որակական բնութագրիչների:
- **երկրորդային վերլուծություն**, որտեղ ազգային ստուգատեսի ընթացքում անցկացված հարցումների հիման վրա հետազոտվել են սովորողների առաջադիմության վրա ազդող մի քանի գլխավոր գործոններ:

1. Վիճակագրություն

1.1 Ընդհանուր տեղեկություններ

Ստորև ներկայացված են ստուգատեսից աշակերտների միավորների բաշխման հիստոգրամները: Գնահատման 10 միավորանոց սանդղակում հայոց լեզու և հայ գրականության միջին միավորը 5.57 է, իսկ հայոց պատմության միջին միավորը՝ 5.60:

Հայոց լեզու և հայ գրականության միավորների բաշխման հիստոգրամ



Հայոց պատմության միավորների բաշխման հիստոգրամ



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր առարկայից ստուգատեսի մասնակիցների թվերը, միջին միավորները, ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները:

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն	3124	5.57	0.022	1.221
Հայոց պատմություն	3122	5.60	0.026	1.431

1.2 Թեստերի որակական բնութագրիչները

«Հայոց լեզու և հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաներից ստուգատեսի թեստերը կազմված են եղել 4-ական տարբերակներով, որոնց որակական բնութագրիչները[1] ներկայացվում են ստորև:

Թեստերի որակական բնութագրիչները				
Հայոց լեզու և հայ գրականություն				
	Թեստ 1	**Թեստ 2**	**Թեստ 3**	**Թեստ 4**
Մասնակիցների թիվը	800	787	775	762
Միջին միավորը	5.64	5.32	5.89	5.43
Ստանդարտ շեղումը	1.002	1.384	1.178	1.217
Թեստի հուսալիությունը	0.818	0.850	0.835	0.848
Թեստի բարդություն	0.54	0.45	0.59	0.47
Թեստի տարբերակումը	0.46	0.5	0.45	0.47
Հայոց պատմություն				
Մասնակիցների թիվը	800	787	775	760
Միջին միավորը	4.65	6.29	4.98	6.50
Ստանդարտ շեղումը	1.178	1.004	1.288	1.26
Թեստի հուսալիությունը	0.768	0.725	0.811	0.711
Թեստի բարդություն	0.32	0.33	0.39	0.29
Թեստի տարբերակումը	0.37	0.32	0.44	0.31

[1] Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

1.3 Մասնակցությունը ազգային ստուգատեսին

Ինչպես արդեն նշվեց, ստուգատեսին մասնակցել են 8-րդ դասարանի 3124 աշակերտ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը, մասնակից աշակերտների թիվն ու որոշ ցուցանիշներ՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են ստորև:

Աղյուսակ 1

Ազգային ստուգատեսին մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակը, աշակերտների թիվը և միջին միավորները									
Վարչատարածքային միավորներ	Հանրակրթական ուս. հաստատությունների քանակը	Մասնակիցների		Միջին միավորը		Ստանդարտ շեղումը		Ստանդարտ սխալը	
		թիվը	տոկոսը	Հայոց լեզու և հայ գրականություն	Հայոց պատմություն	Հայոց լեզու և հայ գրականություն	Հայոց պատմություն	Հայոց լեզու և հայ գրականություն	Հայոց պատմություն
ՀՀ	**106**	**3124**	**100**	**5.57**	**5.6**	**1.221**	**1.431**	**0.022**	**0.026**
Այդ թվում՝									
Երևան	27	913	29.0	5.56	5.50	1.100	1.489	0.036	0.049
Արագածոտն	8	164	5.1	4.99	5.31	1.311	1.389	0.102	0.108
Արարատ	6	233	7.4	5.18	5.84	1.218	1.447	0.08	0.095
Արմավիր	8	203	6.5	5.14	5.48	1.180	1.539	0.083	0.108
Գեղարքունիք	11	257	8.2	5.43	5.80	1.136	1.262	0.071	0.079
Լոռի	10	259	8.2	5.69	5.69	1.025	1.274	0.064	0.079
Կոտայք	7	224	7.2	5.86	**5.90**	1.027	1.319	0.069	0.088
Շիրակ	9	228	8.2	5.77	5.81	1.162	1.293	0.077	0.086
Սյունիք	7	274	8.4	5.75	5.59	1.430	1.581	0.086	0.095
Վայոց ձոր	5	155	5.0	5.70	5.17	1.239	1.489	0.099	0.120
Տավուշ	8	214	6.8	**6.06**	5.48	1.505	1.3	0.103	0.089

Ստուգատեսի ժամանակ հայոց լեզու և հայ գրականությունից ամենաբարձր միջին միավորը Տավուշի (6.06), իսկ հայոց պատմությունից՝ Կոտայքի մարզում է (5.90) արձանագրվել:

1.4 Առաջադիմությունը ըստ առարկաների

Դիագրամ 1-ում պատկերված է գնահատման 10 միավորանոց սանդղակում (1-3 «անբավարար», 4-5 «բավարար», 6-8 «լավ», 9-10 «գերազանց») գնահատականների

տոկոսային բաշխումը, որից երևում է, որ գերակշռել են 6, 7 և 8 գնահատականներ ստացողները՝ հայոց լեզու և հայ գրականությունից՝ աշակերտների 68.4%-ը, հայոց պատմությունից՝ 65.3%-ը:

Դիագրամ 1



1.5 Ստուգատեսի արդյունքները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Դիագրամ 2-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի միջին միավորները՝ դասավորված ցուցանիշների աճման կարգով:

Դիագրամ 2



Ինչպես նկատում ենք դիագրամ 2-ում Տավուշի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Լոռու մարզերում հայոց լեզու և հայ գրականության միջին միավորները (5.69-6.06) բարձր են հանրապետական միջին միավորից (5.57), իսկ հայոց պատմության պարագայում Կոտայքի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում միջին միավորները (5.69-5.90) բարձր են հանրապետական միջին միավորից (5.60): Հայոց լեզու և հայ գրականության և հայոց պատմության միջին միավորների միջև ամենամեծ տարբերությունը արձանագրվել է Արարատի մարզում (0.66 միավոր):

Աղյուսակ 2

Ազգային ստուգատեսի արդյունքների վիճակագրական տվյալները ըստ գնահատականների խմբերի

Վարչատարածքային միավորը	Մասնակիցների թիվը	Առարկան	Առավելագույն միավոր	Նվազագույն միավոր	Միջին միավորը	1–3 միավորներ հավաքածներ (անբավարար)		4–5 միավորներ հավաքածներ (բավարար)		6–8 միավորներ հավաքածներ (լավ)		9–10 միավորներ հավաքածներ (գերազանց)	
						Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
ՀՀ	**3124**	Հ.լ. և հ.գ.	10	1	5.57	144	4.6	1325	42.4	1615	51.7	40	1.3
		Հ.պ.	10	1	5.60	233	7.5	1156	37	1695	54.2	40	1.3
Երևան	913	Հ.լ. և հ.գ.	9	1	5.56	35	3.8	407	44.6	464	50.8	7	0.8
		Հ.պ.	9	1	5.50	85	9.3	354	38.8	462	50.6	12	1.3
Արագածոտն	164	Հ.լ. և հ.գ.	8	1	4.99	19	11.6	87	53	58	35.4	0	0
		Հ.պ.	8	1	5.31	15	9.1	69	42.1	80	48.8	0	0
Արարատ	233	Հ.լ. և հ.գ.	9	1	5.18	9	3.9	137	58.8	85	36.4	2	0.9
		Հ.պ.	10	1	5.84	11	4.7	87	37.4	131	56.2	4	1.7
Արմավիր	203	Հ.լ. և հ.գ.	10	1	5.14	11	5.4	131	64.6	57	28	4	2
		Հ.պ.	10	1	5.48	24	11.8	71	35	104	51.2	4	2
Գեղարքունիք	257	Հ.լ. և հ.գ.	10	2	5.43	10	3.9	147	57.2	95	37	5	1.9
		Հ.պ.	9	1	5.80	9	3.5	86	33.5	160	62.2	2	0.8
Լոռի	259	Հ.լ. և հ.գ.	9	3	5.69	8	3.1	73	28.2	175	67.5	3	1.2
		Հ.պ.	10	3	5.69	11	4.2	102	39.4	143	55.2	3	1.2
Կոտայք	224	Հ.լ. և հ.գ.	9	3	5.86	5	2.5	64	28.3	153	68.6	2	0.6
		Հ.պ.	10	2	**5.90**	8	3.6	83	33.5	135	60.2	6	2.7
Շիրակ	228	Հ.լ. և հ.գ.	10	2	5.77	10	4.4	64	28.1	151	66.2	3	1.3
		Հ.պ.	9	3	5.81	11	4.8	74	32.5	140	61.4	3	1.3
Սյունիք	274	Հ.լ. և հ.գ.	10	1	5.75	20	7.3	83	30.3	167	60.9	4	1.5
		Հ.պ.	9	1	5.6	26.0	9.5	89.0	32.5	156.0	56.9	3.0	1.1
Վայոց ձոր	155	Հ.լ. և հ.գ.	8	2	5.70	9	5.8	53	34.2	93	60	0	0
		Հ.պ.	8	1	5.17	18	11.6	70	45.2	67	43.2	0	0
Տավուշ	214	Հ.լ. և հ.գ.	10	2	**6.06**	8	3.7	79	36.9	117	54.7	10	4.7
		Հ.պ.	9	1	5.48	15	7	79	36.9	117	54.7	3	1.4

Աղյուսակ 2-ից երևում է, որ ամենացածր առավելագույն միավորը (8) և՛ հայոց լեզու և հայ գրականությունից, և՛ հայոց պատմությունից Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում է: Նվազագույն (1) միավոր չի արձանագրվել հայոց լեզու և հայ գրականությունից Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի, իսկ հայոց պատմությունից՝ Լոռու, Կոտայքի, և Շիրակի մարզերում:

Գնահատականների խմբերի տոկոսային բաշխվածությունն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների՝ ավելի պարզ ներկայացված է դիագրամ 3-ում:

Դիագրամ 3ա



Հայոց լեզու և հայ գրականությունից «անբավարար» ստացած աշակերտների ամենափոքր թիվը Կոտայքի մարզում է (2.5%), մյուս վարչատարածքային միավորներում այդ թիվը տատանվում է 2.5-11.6%: «Անբավարար» ստացած աշակերտների ամենամեծ տոկոսը Երևանում է (11.6%), սա նաև բացատրվում է, նրանով, որ ստուգատեսի մասնակիցների 29%-ը Երևանից են:

«Բավարար» գնահատական ստացած աշակերտների ամենափոքր թիվը Շիրակի մարզում է (28.1%): «Բավարար» գնահատականները դիագրամ 3 ա-ում նշված են կապույտ գույնով և ՀՀ վարչատարածքային միավորներում աշակերտների 28.1-64.6%-ը ստացել է բավարար միավորներ: «Բավարար» ստացած աշակերտների ամենամեծ թիվը Արմավիրի մարզում է (64.6%):

«Լավ» գնահատական ստացած աշակերտների ամենափոքր թիվը Արմավիրի մարզում է (28%): «Լավ» գնահատական ՀՀ վարչատարածքային միավորներում ստացել են աշակերտների 28-68.6%-ը: Ամենաշատ «լավ» գնահատական ստացել են Կոտայքի մարզի աշակերտները (68.6%):

«Գերազանց» գնահատական ստացած աշակերտների ամենափոքր թիվը Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում է (0%), իսկ ամենամեծ թվով «գերազանց» ստացած աշակերտները Տավուշի մարզից են (4.7%):

Դիագրամ 3բ



Հայոց պատմությունից «անբավարար» ստացած աշակերտների ամենափոքր թիվը (3.5%) Գեղարքունիքի մարզում է, իսկ ամենամեծ «անբավարար» գնահատականների թիվը Արմավիրում է (11.8%): «Անբավարար» ստացողների թիվը ՀՀ տարածքային միավորներում եղել է 3.5-11.8%:

«Բավարար» ստացած աշակերտների ամենափոքր թիվը Շիրակի և Սյունիքի մարզերում է (32.5%), իսկ ամենամեծ թիվը Վայոց ձորում է (45.2%): «Բավարար» գնահատական ստացած աշակերտների թիվը եղել է 32.5-45.2%:

«Լավ» ստացած աշակերտների ամենափոքր թիվը Վայոց ձորում է (43.2%)՝ տատանվելով 43.2 – 62.2%, իսկ ամենամեծ թիվը՝ Գեղարքունիքում (62.2%):

«Գերազանց» գնահատական ստացած աշակերտների ամենափոքր թիվը նորից Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում է (0%), իսկ ամենամեծ թիվը՝ Կոտայքում (2.7%): «Գերազանց» ստացած աշակերտների թիվը ՀՀ վարչատարածքային միավորներում եղել է 0-2.7%:

1.6 Ստուգատեսի արդյունքները ըստ բնակավայրի տիպերի

Դիագրամ 4



Դիագրամ 4-ում պատկերված է ստուգատեսի մասնակից 8-րդ դասարանի աշակերտների տոկոսային բաշխումն ըստ բնակավայրերի տիպերի, որից հետևում է, որ մասնակիցների 27%-ը եղել են գյուղական (գյուղերից և բարձր լեռնային գյուղերից), 73%-ը՝ քաղաքային բնակավայրերից (խոշոր, միջին և փոքր քաղաքներից):

Դիագրամ 5



Ինչպես նկատում ենք դիագրամ 5–ում հայոց լեզու և հայ գրականությունից ամենաբարձր միջին միավորը (5.79) բարձր լեռնային գյուղերում սովորողներինն է, որը ըստ էության մոտ է միջին (5.75) և փոքր (5.78) քաղաքներում սովորողների միջին միավորներին: Ամենացածր միջին միավորը արձանագրվել է գյուղերում սովորողների

շրջանում (5.27), որը նշանակալիորեն ցածր է մյուս բոլոր բնակավայրերում ապրող աշակերտների միջին միավորներից: Հետաքրքիր է նաև, որ միջին և փոքր քաղաքներում բնակվող աշակերտների միջին միավորները (համապատասխանաբար 5.75 և 5.78) նշանակալիորեն բարձր են մեծ քաղաքներում բնակվող աշակերտների միջին միավորից (5.56):

Հայոց պատմության պարագայում ամենաբարձր միջին միավորը միջին քաղաքներում բնակվող սովորողների շրջանում է (5.75), որը նշանակալիորեն բարձր է և՛ խոշոր քաղաքներում, և՛ գյուղերում բնակվողների միջին միավորներից (համապատասխանաբար 5.53 և 5.27): Միջին քաղաքներում սովորողների և՛ հայոց լեզու և հայ գրականության, և՛ հայոց պատմության միջին ցուցանիշը միևնույնն է (5.75):

Համեմատելով միջին միավորների տատանման միտումները՝ նկատում ենք, որ հայոց լեզու և հայ գրականության դեպքում խոշոր քաղաքներից մինչև բարձր լեռնային գյուղեր միջին միավորները մի փոքր աճում են, իսկ հայոց պատմության պարագայում միջին միավորները՝ նվազում:

1.7 Ստուգատեսի արդյունքները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Դիագրամ 6



Դիագրամ 6-ում ներկայացված է ստուգատեսի մասնակիցների բաշխումը ըստ հանրակրթական ուսումնական հատատությունների տիպերի: Ինչպես նկատում ենք, մասնակիցների մեծամասնությունը հիմնական և միջնակարգ դպրոցներից են:

Ստորև ներկայացվում է աշակերտների միջին միավորները հայոց լեզու և հայ գրականությունից և հայոց պատմությունից՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:

Աղյուսակ 3

Ստուգատեսի մասնակիցների միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատության տիպերի			
Միջին միավորները / Դպրոցի տիպը	Հայոց լեզու և հայ գրականություն	Հայոց պատմություն	Մասնակիցների թիվը (տոկոսը)
Ավագ	5.82	**6.33**	22 (0.7%)
Հիմնական	5.64	5.58	1935(62%)
Միջնակարգ	5.43	5.58	1094(35%)
Վարժարան	**6.07**	6.40	11(0.4%)
Կրթահամալիր	5.73	5.79	62(2%)

Աղյուսակից[2] երևում է, որ հայոց լեզու և հայ գրականության ամենաբարձր միջին միավորը արձանագրվել է վարժարանների, իսկ հայոց պատմությունից՝ ավագ դպրոցների աշակերտների խմբերում: Միջնակարգ դպրոցի սովորողների հայոց լեզու և հայ գրականության միջին ցուցանիշը (5.64) վիճակագրորեն նշանակալիորեն բարձր է միջնակարգ դպրոցների սովորողների միջին ցուցանիշից (5.43): Հայոց պատմության դեպքում վարժարաններում սովորողների միջին միավորը (6.40) նշանակալիորեն բարձր է և՛ հիմնական, և՛ միջնակարգ դպրոցների միջին միավորից (5.58):

[2] Ընդհանրապես աղյուսակներում մգեցված են խմբերում ցուցաբերված հանրակրթական ցուցանիշների միջին միավորների մեծագույն արժեքները: Միևնույն գույնով նշված են քննարկվող այն խմբերի ցուցանիշները, որտեղ խմբերի հանրակրթական միջին միավորների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են:

Ա. Ամենաբարձր միջին արդյունք ցուցաբերած դպրոցների լավագույն տասնյակները

Աղյուսակ 4-ում ներկայացված են հայոց լեզու և հայ գրականությունից և հայոց պատմությունից բարձր արդյունքներ ցուցաբերած լավագույն 10 դպրոցները:

Աղյուսակ 4

Ստուգատեսից ամենաբարձր միջին արդյունքը ցուցաբերած դպրոցների լավագույն տասնյակները							
№	Ստուգատեսին մասնակցած դպրոցները	Վարչատարածքային միավորը	Մասնակիցների թիվը	Նվազագույն միավորը	Առավելագույն միավորը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու և հայ գրականություն							
1	**Թթուջրի միջնակարգ դպրոց**	Գեղարքունիք	11	5	10	**6.91**	1.700
2	**Զորակապի միջնակարգ դպրոց**	Շիրակ	14	5	10	**6.79**	1.528
3	**Բերդի թիվ 3 հիմնական դպրոց**	Տավուշի	23	3	9	**6.65**	1.555
4	**Աշոցքի միջնակարգ դպրոց**	Շիրակ	21	6	8	**6.52**	0.602
5	**Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոց**	Կոտայք	35	4	9	**6.51**	1.147
6	**Իջևանի թիվ հիմնական դպրոց**	Տավուշ	22	3	10	**6.50**	1.970
7	**Կապանի թիվ 7 հիմնական դպրոց**	Սյունիք	72	1	9	**6.32**	1.372
8	**«Օհանյանի վարժարան» ՍՊԸ**	Երևան	12	5	8	**6.27**	0.786
9	**Արփիի միջնակարգ դպրոց**	Վայոց ձոր	33	5	7	**6.25**	0.754
10	**Սպիտակի թիվ 1 հիմնական դպրոց**	Լոռի	52	4	8	**6.18**	0.968
Հայոց պատմություն							
1	**Աշոցքի միջնակարգ դպրոց**	Շիրակ	21	4	9	**6.77**	1.246
2	**Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոց**	Կոտայք	35	4	9	**6.68**	1.321
3	**Այգեշատի միջնակարգ դպրոց**	Արմավիր	19	4	10	**6.67**	1.365
4	**Սոլակի միջնակարգ դպրոց**	Կոտայք	16	5	10	**6.61**	1.488
5	**«Էլիտա» հեղինակային միջնակարգ դպրոց**	Երևան	17	4	9	**6.55**	1.425
6	**Բերդի թիվ 3 հիմնական դպրոց**	Տավուշ	23	3	9	**6.44**	1.539
7	**«Օհանյանի վարժարան» ՍՊԸ**	Երևան	11	5	8	**6.40**	0.773
8	**Արփիի միջնակարգ դպրոց**	Վայոց ձոր	12	4	8	**6.37**	1.446
9	**Ճամբարակի թիվ 2 հիմնական դպրոց**	Գեղարքունիք	20	3	9	**6.33**	1.449
10	**«Օլիմպոս» կրթահամալիր ավագ դպրոց**	Երևան	22	4	9	**6.33**	1.256

Ինչպես երևում է աղյուսակ 4-ում, լավագույն տասնյակում ընդգրկված ուսումնական հաստատությունների հայոց լեզու և հայ գրականությունից միջին միավորները բաշխված են 6.18-6.91, իսկ հայոց պատմությունից՝ 6.33-6.77 միջակայքերում: «Անբավարար» գնահատականներ չեն արձանագրվել հայոց լեզու և հայ գրականությունից նշվածներից 7 դպրոցների, իսկ հայոց պատմությունից 8 դպրոցների արդյունքներում, ինչը, անշուշտ, խրախուսելի է:

1.8 Ստուգատեսի արդյունքները ըստ սեռերի

Դիագրամ 7-ում ներկայացված են ստուգատեսին մասնակցած աղջիկների և տղաների տոկոսները:

Դիագրամ 7



Դիագրամից երևում է, որ մասնակիցների թվում մի փոքր գերակշռել են տղաները:

Աղյուսակում ըստ աշակերտների սեռի ներկայացված է հայոց լեզու և հայ գրականությանից և հայոց պատմությունից միջին միավորները:

Աղյուսակ 5

Ստուգատեսի մասնակիցների միջին միավորները ըստ սեռերի			
Միջին միավորները / Դպրոցի տիպը	Հայոց լեզու և հայ գրականություն	Հայոց պատմություն	Մասնակիցների թիվը (տոկոսը)
Աղջիկ	**5.84**	**5.73**	1530 (49%)
Տղա	5.32	5.48	1556 (51%)

Ինչպես երևում է աղյուսակից, աղջիկների միջին միավորները և՛ հայոց լեզու և հայ գրականությունից, և՛ հայոց պատմությունից բարձր են տղաների միջին միավորներից, և այդ տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են:

2. Աշակերտների որոշ ունակություններ հայոց լեզվից

ՀԱԱՍ 2018 թեստերում ընդգրկված հայոց լեզու և հայ գրականության և հայոց պատմության թվով 27 առաջադրանքները միտված էին 8-րդ դասարանցիների շրջանում ստուգել այդ հանրակրթական առարկաներից սովորողների արդեն ձևավորված գիտելիքներն ու կարողությունները: Առանձնացվել և ուսումնասիրվել են նաև հայոց լեզու և հայ գրականությունից թեստային այն առաջադրանքները, որոնք ստուգում են աշակերտի ճիշտ կռահելու, ճիշտ խոսքի հմտություն ցուցաբերելու և քերականական իմացության ունակությունները:

2.1 Կռահում

«Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի թեստերի առաջադրանքներ (1-ին թեստի 3 առաջադրանքներ՝ Ա4, Ա6 և Ա25, 2-րդ թեստի 3 առաջադրանքներ՝ Ա33, Ա46 և Ա51, 3-րդ թեստի 3 առաջադրանքներ՝ Ա4, Ա5 և Ա20 և 4-րդ թեստի 1 առաջադրանք՝ Ա33), այսպես կոչված, կռահման ունակություն ստուգող առաջադրանքներ են, այսինքն՝ դրանց լուծման համար, բացի գիտելիքի առկայությունից, պահանջվում է առաջադրանքի լուծման ճիշտ պատասխանը կռահելու հմտություն: Այլ կերպ ասած՝ աշակերտը պետի է գլխի ընկնի, թե ինչ է իրենից պահանջվում կատարել:

Աղյուսակ 6

Կռահելու ունակություն ստուգող առաջադրանքների պատասխանների տոկոսները						
Առաջադրանքներ	Չեն լուծել	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր	Ընդամենը
Թեստ 1.Ա4, Ա6, Ա25	32%	35%	22%	9%	2%	100%
Թեստ 2. Ա33, Ա46, Ա51	25%	37%	30%	8%		100%
Թեստ 3. Ա4, Ա5, Ա20	31%	35%	22%	9%	3%	100%
Թեստ4. Ա33	90%	10%				100%

Աշակերտների կռահելու ունակությունը ստուգող առաջադրանքների պատասխաններում մեծ թիվ են կազմում նվազագույն 1 միավոր (35-37%) կամ 2 (22-30%) միավոր վաստակած աշակերտները, իսկ առավելագույն 4 միավոր վաստակել են 1-ին թեստը լրացնողների 2%-ը, 3-րդ թեստը լրացնողների 3%-ը: Առավելագույն 3 միավոր վաստակել են 2-րդ թեստը լրացնողների 8%: Այս տիպի առաջադրանքներին չեն պատասխանել 1-ին թեստը լրացնողների 32%-ը, 2-րդ թեստը լրացնողների 25%-ը, 3-րդ թեստը լրացնողների 31%-ը, իսկ 4-րդ թեստը լրացնողների 90%-ը:

4-րդ թեստում կռահում ստուգող առաջադրանքների թիվը 1 է, և այն չի տարանջատում աշակերտներին (այդ առաջադրանքը լուծողներին և չլուծողներին) ըստ իրենց առաջադիմության միջին միավորների:

Նախապես ենթադրվում էր, որ այն աշակերտները, որոնք առավել լավ կպատասխանեն կռահելու ունակություն ստուգող առաջադրանքներին, ստուգատեսի ժամանակ կունենային ամենաբարձր միջին միավորները:

Թեստ 1. Կռահում *Դիագրամ 8.1*



1-ին թեստի պարագայում, հակառակ մեր սպասումների, ամենամեծ միջին միավորը եղել է կռահում ստուգող առաջադրանքներից նվազագույն 1 միավոր վաստակած աշակերտների միավորը (5.62), որը բարձր է բոլոր մյուս խմբերում աշակերտների առաջադիմության միջին միավորներից (տե՛ս դիագրամ 8.1):

Թեստ 2. Կռահում

Դիագրամ 8.2



2-րդ թեստի պարագայում ամենամեծ միջին միավորը ունեն այդ տիպի առաջադրանքներից առավելագույն 3 միավոր վաստակած աշակերտները (6.15) (տե՛ս դիագրամ 8.2): Այս ցուցանիշը վիճակագրորեն նշանակալիորեն բարձր է և՛ այդ տիպի առաջադրանքներին չպատասխանած աշակերտների առաջադիմության (5.47), և՛ 1 միավոր վաստակած աշակերտների (5.46), և՛ 2 միավոր վաստակածների (5.54) միջին միավորներից: Մեր նախնական վարկածը, որ այս տիպի առաջադրանքները հնարավորինս ավելի շատ լուծողները կունենան ամենաբարձր միջին միավորները, ապացուցվում է 2-րդ թեստում ընդգրկված կռահելու ունակություն ստուգող երեք առաջադրանքների միջոցով:

Թեստ 3. Կռահում

Դիագրամ 8.3



3-րդ թեստի կռահում ստուգող առաջադրանքներից 2 միավոր վաստակած աշակերտների առաջադիմության միջին միավորը նշանակալիորեն բարձր է այդ առաջադրանքները չլուծած աշակերտների միջին միավորից:

Ինչպես նկատում ենք, վերոնշյալ երեք դիագրամներից այս տիպի առաջադրանքները չլուծող աշակերտների միջին միավորները ավելի ցածր են այդ առաջադրանքներից տարբեր միավորներ վաստակած աշակերտների միջին միավորներից:

Որոշակի ուսումնասիրություն է կատարվել կապելով այս առաջադրանքների պատասխանների արդյունքները աշակերտի կողմից լրացված հարցաթերթի *«Ո՞րն է քո ամենասիրած առարկան»* և *«Ի՞նչ ես ուզում դառնալ»* հարցերի հետ:

«Ո՞րն է քո ամենասիրած առարկան»

Աշակերտի հարցաթերթում եղել է *«Ո՞րն է քո ամենասիրած առարկան»*՝ մի հարց, որի միջոցով ցանկացել ենք պարզել աշակերտի նախասիրությունը ամենասիրած առարկայի վերաբերյալ՝ կապելով այդ կարծիքը ստուգատեսի ժամանակ ուսումնասիրվող աշակերտի առաջադիմության ցուցանիշների հետ (տե՛ս էջեր 31-32):

Նախապես ենթադրում էինք, որ ովքեր նշել են «Մաթեմատիկա» առարկան, որպես իրենց ամենասիրած հանրակրթական առարկա, պետք է, որ ճիշտ լուծած լինեն կռահում տեսակի առաջադրանքները:

Թվով ավելի շատ աշակերտներ, ովքեր 1 և 2 միավորներ են վաստակել այս տիպի առաջադրանքներից ամենասիրած առարկա ընտրել են մաթեմատիկան: Այս վարկածը ապացուցվում է և՛ «Մաթեմատիկա», և՛ «Կենսաբանություն» առարկաները ամենասիրած առարկա նախընտրողների դեպքում, երբ դիտարկում ենք կռահման ունակություն ստուգող առաջադրանքներից 1-4 միավոր հավաքած աշակերտների խմբերը ըստ իրենց նախընտրած հանրակրթական ամենասիրելի առարկայի ընտության (տե՛ս աղյուսակներ1[3] 8.1, 8.2 և 8.3):

Հարկավոր է նշել նաև, որ 4 առավելագույն միավորը հավաքել են թվով ավելի շատ աշակերտներ, որոնց համար «Հայ գրականություն» առարկան է ամենասիրելին (տե՛ս աղյուսակ 7.1):

[3] Բոլոր աղյուսակներում գույնով տարանջատված են մասնակիցների ամենամեծ թիվ ունեցող խմբերը:

Աղյուսակ 7.1

Կռահելու ունակություն ստուգող 1-ին թեստի առաջադրանքների պատասխանների տոկոսները ըստ աշակերտների ամենասիրած առարկայի ընտրության						
Ամենասիրած առարկան	**Չեն լուծել**	**1 միավոր**	**2 միավոր**	**3 միավոր**	**4 միավոր**	**Ընդամենը**
Մաթեմատիկա	**47**	**50**	**32**	6	1	**136**
	35%	**37%**	**24%**	4%	1%	**100%**
Ֆիզիկա	7	11	8	5	1	32
	22%	34%	25%	16%	3%	100%
Քիմիա	15	7	7	3	0	32
	47%	22%	22%	9%	0%	100%
Կենսաբանություն	38	34	23	7	0	102
	37%	33%	23%	7%	0%	100%
Աշխարհագրություն	14	27	14	7	2	64
	22%	42%	22%	11%	3%	100%
Հայոց լեզու	19	16	10	3	2	50
	38%	32%	20%	6%	4%	100%
Հայ գրականություն	23	31	20	6	**4**	84
	27%	37%	24%	7%	**5%**	100%
Հայոց պատմություն	20	16	13	2	0	51
	39%	31%	25%	4%	0%	100%
Ռուսաց լեզու	23	21	7	8	1	60
	38%	35%	12%	13%	2%	100%
Օտար լեզուներ	19	25	14	5	1	64
	30%	39%	22%	8%	2%	100%
Այլ	0	1	1	0	1	3
	0%	33%	33%	0%	33%	100%
1-ից ավելի պատասխան	16	25	17	**10**	0	68
	24%	37%	25%	**15%**	0%	100%
Ամենասիրած առարկա չեն նշել	18	19	6	7	1	51
	35%	37%	12%	14%	2%	100%
Ընդամենը	259	283	172	69	14	797
	32%	36%	22%	9%	2%	100%

Աղյուսակ 7.2

Կռահելու ունակություն ստուգող 2-րդ թեստի առաջադրանքների պատասխանների տոկոսները ըստ աշակերտների ամենասիրած առարկայի ընտրության					
Ամենասիրած առարկան	**Չեն լուծել**	**1 միավոր**	**2 միավոր**	**3 միավոր**	**Ընդամենը**
Մաթեմատիկա	32	35	**35**	8	110
	29%	32%	**32%**	7%	100%
Ֆիզիկա	12	14	13	3	42
	29%	33%	31%	7%	100%
Քիմիա	2	9	5	3	19
	11%	47%	26%	16%	100%
Կենսաբանություն	**34**	**43**	31	**10**	**118**
	29%	**36%**	26%	**9%**	**100%**
Աշխարհագրություն	10	32	13	5	60
	17%	53%	22%	8%	100%
Հայոց լեզու	12	13	9	3	37
	32%	35%	24%	8%	100%
Հայ գրականություն	15	32	31	3	81
	19%	40%	38%	4%	100%
Հայոց պատմություն	12	21	16	6	55
	22%	38%	29%	11%	100%
Ռուսաց լեզու	27	28	20	6	81
	33%	35%	25%	7%	100%
Օտար լեզուներ	13	21	25	4	63
	21%	33%	40%	6%	100%
Այլ	0	1	1	0	2
	0%	50%	50%	0%	100%
1-ից ավելի պատասխան	16	27	32	4	79
	20%	34%	41%	5%	100%
Ամենասիրած առարկա չեն նշել	14	16	7	4	41
	34%	39%	17%	10%	100%
Ընդամենը	199	292	238	59	788
	25%	37%	30%	8%	100%

Աղյուսակ 7.3

Կռահելու ունակություն ստուգող 3-րդ թեստի առաջադրանքների պատասխանների տոկոսները ըստ աշակերտների ամենասիրած առարկայի ընտրության						
Ամենասիրած առարկան	**Չեն լուծել**	**1 միավոր**	**2 միավոր**	**3 միավոր**	**4 միավոր**	**Ընդամենը**
Մաթեմատիկա	31	**41**	18	**14**	**3**	**107**
	29%	**38%**	17%	**13%**	**3%**	**100%**
Ֆիզիկա	10	14	8	4	2	38
	26%	37%	21%	11%	5%	100%
Քիմիա	8	4	4	5	1	22
	36%	18%	18%	23%	5%	100%
Կենսաբանություն	31	34	**20**	9	1	95
	33%	36%	**21%**	10%	1%	100%
Աշխարհագրություն	18	30	16	8	1	73
	25%	41%	22%	11%	1%	100%
Հայոց լեզու	8	14	7	4	1	34
	24%	41%	21%	12%	3%	100%
Հայ գրականություն	**37**	20	18	5	**3**	83
	45%	24%	22%	6%	**4%**	100%
Հայոց պատմություն	16	21	16	3	2	58
	28%	36%	28%	5%	3%	100%
Ռուսաց լեզու	27	29	**20**	10	**3**	89
	30%	33%	**23%**	11%	**3%**	100%
Օտար լեզուներ	14	20	14	7	2	57
	25%	35%	25%	12%	4%	100%
Այլ	2	0	1	0	0	3
	67%	0%	33%	0%	0%	100%
1-ից ավելի պատասխան	19	30	14	5	2	70
	27%	43%	20%	7%	3%	100%
Ամենասիրած առարկա չեն նշել	16	17	12	2	0	47
	34%	36%	26%	4%	0%	100%
Ընդամենը	237	274	168	76	21	776
	31%	35%	22%	10%	3%	100%

«Ի՞նչ ես ուզում դառնալ»

Աշակերտի հարցաթերթում եղել է *«Ի՞նչ ես ուզում դառնալ»* հարցը, որի միջոցով ցանկացել ենք պարզել աշակերտների կողմնորոշվածությունը իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում (տե՛ս էջեր 33-34):

Աղյուսակ 8.1

Հարցաթերթի «Ի՞նչ ես ուզում դառնալ» հարցը ըստ կռահելու ունակություն ստուգող 1-ին թեստի առաջադրանքների պատասխանների տոկոսների						
Մասնագիտություններ	**Չեն լուծել**	**1 միավոր**	**2 միավոր**	**3 միավոր**	**4 միավոր**	**Ընդամենը**
Ուսուցիչ	8	11	4	2	0	25
	32%	44%	16%	8%	0%	100%
Գիտնական	0	2	1	1	0	4
	0%	50%	25%	25%	0%	100%
Արվեստագետ	10	6	4	0	0	20
	50%	30%	20%	0%	0%	100%
Բժիշկ	**36**	**32**	17	7	1	93
	39%	**34%**	18%	8%	1%	100%
Արհեստավոր	8	6	2	1	0	17
	47%	35%	12%	6%	0%	100%
Բիզնեսմեն	17	17	11	2	**2**	49
	35%	35%	22%	4%	**4%**	100%
Սպորտսմեն	22	25	**20**	**8**	**2**	77
	29%	33%	**26%**	**10%**	**3%**	100%
Գյուղատնտես	0	2	0	0	0	2
	0%	100%	0%	0%	0%	100%
Իրավաբան	20	11	12	3	0	46
	44%	24%	26%	7%	0%	100%
Տնտեսագետ	6	15	10	2	1	34
	18%	44%	29%	6%	3%	100%
Ծրագրավորող	20	26	16	7	0	69
	29%	38%	23%	10%	0%	100%
Լրագրող	5	7	5	3	**2**	22
	23%	32%	23%	14%	**9%**	100%
Չեն որոշել	**51**	**56**	**34**	**13**	**3**	157
	33%	**36%**	**22%**	**8%**	**2%**	100%
1-ից ավելի պատասխան	**43**	**54**	**28**	**15**	**2**	142
	30%	**38%**	**20%**	**11%**	**1%**	100%
Այլ	1	2	1	1	0	5
	20%	40%	20%	20%	0%	100%
Չեն պատասխանել	12	11	7	4	1	35
	34%	31%	20%	11%	3%	100%
Ընդհանուր	259	283	172	69	14	797
	33%	36%	22%	9%	2%	100%

Սովորողների մեծ մասը դեռևս չունի հստակ պատասխան, թե ինչ է ուզում դառնալ (այս մասին ավելի մանրամասն՝ հետագայում): Վերոնշյալ աղյուսակում

ներկայացված է կռահում ստուգող առաջադրանքներից աշակերտների վաստակած միավորների և նրանց նախասիրած մասնագիտությունների պատասխանների կապը: Ինչպես նկատում ենք, այստեղ ևս մեծ թվով աշակերտներ չեն որորշել, կամ այդ հարցին տվել են 1-ից ավելի պատասխան: Մգեցված են նաև այն մասնագիտություններն ընտրած սովորողների խմբերը, որոնք ավելի շատ են պատասխանել կռահում ստուգող առաջադրանքներին:

Աղյուսակ 8.2

Հարցաթերթի «Ի՞նչ ես ուզում դառնալ» հարցը ըստ կռահելու ունակություն ստուգող 2-րդ թեստի առաջադրանքների պատասխանների տոկոսների					
Մասնագիտություններ	**Չեն լուծել**	**1 միավոր**	**2 միավոր**	**3 միավոր**	**Ընդամենը**
Ուսուցիչ	7	13	11	0	31
	23%	42%	36%	0%	100%
Արվեստագետ	5	13	13	3	34
	15%	38%	38%	9%	100%
Բժիշկ	**29**	**35**	23	**10**	97
	30%	**36%**	24%	**10%**	100%
Արհեստավոր	3	9	1	1	14
	21%	64%	7%	7%	100%
Բիզնեսմեն	14	13	4	0	31
	45%	42%	13%	0%	100%
Սպորտսմեն	19	26	**29**	**10**	84
	23%	31%	**35%**	**12%**	100%
Գյուղատնտես	3	0	2	0	5
	60%	0%	40%	0%	100%
Իրավաբան	11	22	13	4	50
	22%	44%	26%	8%	100%
Տնտեսագետ	11	8	9	2	30
	37%	27%	30%	7%	100%
Ծրագրավորող	26	26	23	6	81
	32%	32%	28%	7%	100%
Լրագրող	4	5	6	0	15
	27%	33%	40%	0%	100%
Չեն որոշել	24	**48**	53	6	131
	18%	**37%**	41%	5%	100%
1-ից ավելի պատասխան	3	4	2	0	9
	33.30%	44.40%	22.20%	0.00%	100.00%
Այլ	**31**	**58**	41	**16**	146
	21%	**40%**	28%	**11%**	100%
Չեն պատասխանել	9	12	8	1	30
	30%	40%	27%	3%	100%
Ընդհանուր	199	292	238	59	788
	25%	37%	30%	8%	100%

Կռահելու ունակություն ստուգող առաջադրանքներին որոշակի պատասխաններ տված աշակերտների համար ավելի նախընտրելի են ստորև ներկայացված մասնագիտությունները.

- բիզնեսմեն,
- լրագրող,
- սպորտսմեն,
- բժիշկ:

2.2 Ճիշտ խոսքի հմտություն

Թեստերի որոշ առաջադրանքներ (թեստ 1-ին առաջադրանք 14, 19ա և 23, թեստ 2-րդ առաջադրանք 34, 43, 45ա և 47, թեստ 3-րդ 10, 14, 17, 21 և 23, թեստ 4-րդ առաջադրանք 36, 39, 41, 47 և 51) ստուգում են աշակերտի խոսքի կառուցման, բառագործածության (զանազան ոճերի բառերի ճանաչման) հմտությունը, խոսքում բառի ճիշտ գործածություն (բառագործածության սխալներից խուսափելու) ունակությունը:

Աղյուսակ 9

Ճիշտ խոսքի հմտություն ստուգող առաջադրանքների պատասխանների տոկոսները								
Առաջադրանքներ	Չեն լուծել	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր	5 միավոր	6 միավոր	Ընդամենը
Թեստ 1. Ա14, Ա19Ա, Ա23	17%	36%	31%	16%				100%
Թեստ 2. Ա34, Ա43, Ա45Ա, Ա47	15%	27%	24%	15%	13%	6%		100%
Թեստ 3. Ա10, Ա14, Ա17, Ա21, Ա23	9%	21%	22%	19%	14%	10%	5%	100%
Թեստ 4. Ա36, Ա39, Ա41, Ա47, Ա51	22%	27%	20%	15%	11%	4%	1%	100%

1-ին թեստում նման առաջադրանքների ճիշտ պատասխաններով հնարավոր է եղել ձեռք բերել առավելագույնը 3 միավոր, 2-րդ թեստում՝ առավելագույնը 5 միավոր, 3-րդ և 4-րդ թեստերում՝ առավելագույնը 6 միավոր: 1 միավոր վաստակել է աշակերտների 21-36%-ը, այս տիպի առաջադրանքներից ոչ մի միավոր չի վաստակել աշակերտների 9-22%-ը:

Ստորև ներկայացվում են նման առաջադրանքներից տարբեր միավորներ վաստակած աշակերտների առաջադիմության ցուցանիշների դիագրամները:

Դիագրամ 9.1

Ճիշտ խոսքի հմտություն ստուգող 1-ին թեստի առաջադրանքների կատարման խմբերում աշակերտների առաջադիմության միջին միավորները



Դիագրամ 9.2

Ճիշտ խոսքի հմտություն ստուգող 4-րդ թեստի առաջադրանքների կատարման խմբերում աշակերտների առաջադիմության միջին միավորները



Ճիշտ խոսքի հմտություն ստուգող առաջադրանքների պարագայում վերոնշյալ 1-6 միավորներ վաստակած և միավոր չվաստակած խմբերում որևէ առարկայական թեստի պարագայում աշակերտների միջին գնահատականները վիճակագրորեն չեն տարբերվում:

2.3 Քերականական իմացություն

Թեստերի այլ առաջադրանքներ (1-ին թեստ՝ առաջադրանք 18, 2-րդ թեստ՝ առաջադրանք 42, 3-րդ թեստ՝ առաջադրանք 15, 16 և 4-րդ թեստ՝ առաջադրանք 36, 42, 44, 45, 49) աշակերտների քերականական իմացությունը ստուգող առաջադրանքներ են:

Աղյուսակ 10

Քերականական իմացություն ստուգող առաջադրանքների պատասխանների տոկոսները								
Առաջադրանքներ	Չեն լուծել	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր	5 միավոր	6 միավոր	Ընդամենը
Թեստ1. Ա18	78%	16%	6%					100%
Թեստ 2. Ա42	76%	19%	5%					100%
Թեստ 3. Ա15, Ա16	36%	48%	13%	3%				100%
Թեստ 4. Ա36, Ա42, Ա44, Ա45, Ա49	19%	26%	27%	15%	9%	3%	1%	100%

Աղյուսակ 10-ում երևում է, որ 1-ին և 2-րդ թեստերում այդ տիպի առաջադրանքների թիվը 1 է, 3-րդ թեստում դրանք 2-ն են, իսկ 4-րդ թեսում՝ 5-ը:

Ստորև ներկայացված են 4-րդ թեստի նման առաջադրանքների կատարման աշակերտների խմբերում առաջադիմության միջին միավորները:

Դիագրամ 9.3

Քերականական իմացություն ստուգող 4-րդ թեստի առաջադրանքների կատարման խմբերում աշակերտների միջին միավորները



Ինչպես նկատում ենք դիագրամ 9.3-ում, 3, 4, 5 և 6 միավոր վաստակած սովորողների առաջադիմության ցուցանիշները ավելի բարձր են, քան այս տիպի առաջադրանքներ չլուծողների միջին միավորները:

3. Հարցաթերթի վերլուծություն

3.1 Ընտանիքի անդամների թվով պայմանավորված սովորողների առաջադիմությունը

Ուսումնասիրությանը մասնակցած սովորողների 83%-ը բազմանդամ (4 հոգի կամ ավելի), իսկ 15%-ը փոքրաթիվ ընտանիքներից է, 2%-ը չի պատասխանել այդ մասին տրված հարցին:

Դիագրամ 10

Բազմանդա՞մ է (4 հոգի կամ ավելի) քո ընտանիքը



Ուսումնասիրվել է, արդյոք բազմանդա՞մ, թե՞ փոքրաթիվ ընտանիքների երեխաներն են ավելի լավ սովորում:

Բազմանդամ ընտանիքներում ապրող՝ 8-րդ դասարանում սովորողների հայոց լեզու և հայ գրականության առաջադիմության միջին միավորը (5.60) մի փոքր բարձր է փոքրաթիվ ընտանիքներում ապրող աշակերտների առաջադիմության միջին միավորից (5.48), հայոց պատմության դեպքում նույնպես բազմանդամ ընտանիքների սովորողների հայոց պատմության առաջադիմության միջին միավորը (5.65) մի փոքր բարձր է փոքրաթիվ ընտանիքների սովորողների միջին միավորից (5.44), և այդ տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է:

3.2 Սովորողների նախասիրությունների ազդեցությունը առաջադիմության վրա

Ա. Ամենասիրած հանրակրթական առարկան

Ուսումնասիրելով 8-րդ դասարանում սովորողների ամենասիրած առարկայի վերաբերյալ նախասիրությունները՝ նկատում ենք, որ աշակերտների 15%-ը նախընտրում է մաթեմատիկա, 13%-ը՝ կենսաբանություն, 10.8%-ը՝ հայ գրականություն, 10%-ը՝ ռուսաց լեզու, 8.4%-ը՝ աշխարհագրություն, 7.7%-ը՝ օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), 6.9%-ը՝ հայոց պատմություն, 5.3%-ը՝ հայոց լեզու, 4.5%-ը՝ ֆիզիկա, 3%-ը՝ քիմիա, 9.5%-ը նշել է երկու և ավելի առարկա, իսկ 5.9%-ը չի նշել որևէ առարկա:

Դիագրամ 11



Դիտարկենք՝ արդյոք կա՞ տարբերություն «Հայոց լեզուն», «Հայ գրականությունը» և «Հայոց պատմությունը» որպես ամենասիրած առարկա նախընտրածների և այլ առարկա նախընտրող աշակերտների՝ այս ստուգատեսի ժամանակ ցուցաբերած արդյունքների միջև:

Դիագրամ 12

Հայոց լեզու և հայ գրականության միջին միավորները ըստ սովորողների ամենասիրած առարկայի խմբավորմամբ



Ստուգատեսի ժամանակ հայոց լեզու և հայ գրականությունից ընդհանուր միջին միավորից (5.57) բարձր ստացել են այն աշակերտները, որոնց ամենասիրած առարկան «Քիմիան» (6.03), «Օտար լեզուները» (5.87) և «Մաթեմատիկան» (5.70) է եղել, իսկ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաները, որպես ամենասիրած առարկա նախընտրողների հայոց լեզվի և հայ գրականության ցուցանիշները մոտ են մյուս առարկաներն ամենասիրածը համարողների ցուցանիշներին: Հարկավոր է նշել, որ «Օտար լեզուները» որպես ամենասիրած առարկա նախընտրողները «Հայոց լեզու և հայ գրականությունից» ցուցաբերել են լավ արդյունքներ, ասել է թե լեզուների նկատմամբ սերը նաև արտահայտվում է հայոց լեզվից լավ ցուցանիշներ ցուցաբերելու հարցում:

Այն աշակերտները, որոնք նշել են, որ «Հայոց պատմությունը» իրենց ամենասիրած առարկան է, ցուցաբերել են հայոց պատմությունից ամենաբարձր միջին միավորը (6.14), որը նշանակալի բարձր է մյուս առարկաները որպես ամենասիրած առարկա նախընտրողների հայոց պատմության միջին միավորներից (տե՛ս դիագրամ 13):

Դիագրամ 13

Հայոց պատմության միջին միավորները ըստ սովորողների ամնասիրած առարկայի խմբավորմամբ



Բ. Աշակերտների ապագա մասնագիտական կողմնորոշվածությունը

Հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դեռևս 8-րդ դասարանում մեծ թվով սովորողներ՝ աշակերտների 20%-ը, չի որոշել, թե ինչ է ուզում դառնալ: Երկրորդ մեծ խումբ կազմող աշակերտները նշել են երկու և ավելի մասնագիտություններ: Սովորողների 12%-ը ցանկանում է դառնալ բժիշկ, 11%-ը՝ սպորտսմեն, 9%-ը՝ ծրագրավորող, 5%-ը՝ իրավաբան (այլ մասնագիտությունների մասին տե՛ս դիագրամ 16):

Դիագրամ 14



Վերոնշյալից եզրակացնում ենք, որ 8-րդ դասարանում, մեծ թվով սովորողներ դեռ չեն պատկերացնում, թե ինչ են ուզում դառնալ: Համեմատաբար ավելի շատ սովորողներ ուզում են դառնալ՝

- **բժիշկ,**
- **սպորտսմեն,**
- **ծրագրավորող,**
- **իրավաբան,**
- **բիզնեսմեն:**

Նշված մասնագիտությունների ցանկից դուրս, որպես այլ պատասխան, սովորողները նշել են հիմնականում արհեստների ոլորտի մասնագիտություններ՝ խոհարար և վարսավիր:

Հայոց լեզու և հայ գրականությունից ամենաբարձր միջին միավորը տնտեսագետ դառնալ ցանկացողներին է (6.02), այնուհետև լրագրող և ուսուցիչ դառնալ ցանկացողներինը (5.96), իսկ այս առարկայից ամենացածր միջին

միավորները գյուղատնտեսի (4.58), արհեստավորի (4.89) և սպորտսմենի (5.19) մասնագիտություն նախընտրողներինն են:

Հայոց պատմությունից ամենաբարձր միջին միավորը (6.20) իրավաբան դառնալ ցանկացողներինն է, այնուհետև տնտեսագետ (6.11) և ուսուցիչ (5.99) ցանկացողներինը, իսկ այս առարկայից ամենացածր միջին միավորները արհեստավորի (4.97), սպորտսմենի և գիտնականի (5.23) մասնագիտություններ նախընտրողներինն են:

3.3 Օգտակար տեղեկությունների հիմնական աղբյուրները

Մեր օրերում ինֆորմացիան հասանելի է տարբեր միջոցներով, և աշակերտները սովորում և տեղեկություններ են ստանում բազմաթիվ աղբյուրներից: Ըստ մեր ուսումնասիրման արդյունքների՝ 8-րդ դասարանում սովորողների 39%-ը օգտակար տեղեկությունները ստանում է դասագրքերից, 35%-ը՝ համակարգչից, 6%-ը՝ հեռուստացույցից, 12%-ը՝ գրքերից և ամսագրերից, իսկ 8%-ը չի պատասխանել կամ նշել է վերոնշյալ տարբերակներից օգտակար տեղեկություններ ստանալու երկու աղբյուր:

Դիտարկվել են սովորողների առաջադիմության ցուցանիշների համադրությունները իրենց համար անհրաժեշտ տեղեկությունները տարբեր աղյուրներից ստացողների խմբերում (տե՛ս աղյուսակ 11):

Աղյուսակ 11

Աշակերտների առաջադիմությունը ըստ տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրների		
Առաջադիմության միջին միավորը / Տեղեկության աղբյուրը	Հայոց լեզու և հայ գրականություն	Հայոց պատմություն
Դասագրքեր	5.60	**5.66**
Համակարգիչ	5.65	5.60
Գրքեր և ամսագրեր	**5.69**	**5.66**
Հեռուստացույց	5.26	5.44

Հայոց լեզու և հայ գրականության ամենաբարձր միջին միավորը գրքերից և ամսագրերից տեղեկություններ ստացող աշակերտների խմբում է (5.69): Հեռուստացույցից օգտակար տեղեկություններ ստացողների միջին միավորը

ամենացածրն է (5.26), և այն վիճակագրորեն նշանակալի ցածր է և՛ դասագրքերից, և՛ համակարգչից, և՛ գրքեր և ամսագրերից տեղեկություններ ստացողների ցուցանիշներից:

Հայոց պատմության ցուցանիշներում, ըստ աշակերտների տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրի խմբավորման չեն արձանագրվել միջին միավորների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ:

Ըստ բնակավայրի տիպերի

Աշակերտների օգտակար տեղեկություն ստանալու հիմնական աղբյուրները և նրանց առաջադիմության միջին միավորները ներկայացվում են ըստ բնակավայրի տիպերի:

Դիագրամ 15

Խոշոր քաղաքներում



Միջին քաղաքներում





Խոշոր և միջին քաղաքներում աշակերտները հիմնականում օգտակար տեղեկություն ստանում են համակարգչից:

Փոքր քաղաքներում





Գյուղերում





Բարձր լեռնային գյուղերում





Փոքր քաղաքներում, գյուղերում և բարձր լեռնային գյուղերում աշակերտների մեծ մասը օգտակար տեղեկատվությունը ստանում են դասագրքերից:

Բոլոր տիպի բնակավայրերում սովորող աշակերտների առաջադիմության ամենացածր միջին միավորները արձանագրվել են հեռուստացույցը որպես օգտակար տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուր նախընտրողների մոտ:

3.4 Համակարգչային տեղեկատվական միջոցների նպատակային կիրառման և դրանց հատկացվող ժամերի ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա

Սովորողները զգալի ժամանակ են ծախսում համակարգչից օգտվելու վրա: Այդ ժամանակը հաճախ օգտագործվում է տնային առաջադրանքների կատարման, ֆիլմեր դիտելու, գիտահանրամատչելի նյութեր կարդալու և խաղալու համար:

Ուսումնասիրվել է, թե ստուգատեսի մասնակից 8-րդ դասարանցիները ինչ նպատակներով են օգտվում համակարգչից և օրական քանի ժամ:

Աղյուսակ 12

Ստուգատեսի մասնակիցների հայոց լեզու և հայ գրականության միջին միավորները և տոկոսները ըստ համակարգչի առջև ծախսված ժամանակի և նպատակային կիրառման

ժամեր / համակարգչի նպատակային կիրառում	բոլորովին ժամանակ չեն ծախսում		մինչև 1 ժամ		1-2 ժամ		2 ժամից ավելի		չեն պատասխանել	
	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը
Տնային առաջադրանքների կատարման	27%	5.54	45%	**5.71**	12%	5.50	8%	5.68	8%	4.94
Ֆիլմեր դիտելու	14%	5.57	29%	5.62	30%	**5.76**	19%	5.53	8%	4.84
Գիտահանրամատչելի նյութեր կարդալու	25%	5.32	46%	5.75	14%	**5.89**	6%	5.74	9%	4.83
Խաղալու	29%	**5.86**	26%	5.72	17%	5.58	20%	5.28	8%	4.80

Ինչպես նկատում ենք աղյուսակ 12-ում, սովորողների ամենացածր միջին միավորները հարցաթերթի համապատասխան հարցերին չպատասխանողներինն են, նրանք կազմում են աշակերտների 8-9%-ը, իսկ ամենաբարձր միջին միավորը (5.89)՝ 1-2 ժամ գիտահանրամատչելի նյութեր կարդալու համար համակարգչից օգտվողներինը:

Սովորողների մի մեծ խումբ (26-46%-ը) նշում է, որ մինչև 1 ժամ է օգտվում համակարգչից: Մինչև 1 ժամ օգտվողների շրջանում հայոց լեզու և հայ գրականությունից ամենաբարձր միջին միավորն ունեն տնային առաջադրանքների կատարման համար այդ ժամանակը ծախսողները (5.71):

Համակարգչից օրական մինչև 1-2 ժամ օգտվող աշակերտների մեծ խումբը (30%-ը) այդ ժամանակը ծախսում է ֆիլմեր դիտելու համար: Այս աշակերտների հայոց լեզու և հայ գրականության միջին միավորը (5.76) նշանակալիորեն բարձր է 2 ժամից ավելի ֆիլմերի դիտելու վրա ծախսող աշակերտների առաջադիմության միջին միավորից (5.53):

Ծնողների և շահագրգիռ անձանց ուշադրությունը հրավիրելով աղյուսակ 14-ում ամփոփվող արդյունքների վրա՝ նշենք, որ համակարգչային խաղերին բոլորովին ժամանակ չտրամադրողների հայոց լեզու և հայ գրականության միջին միավորը ամենաբարձրն է (5.86), այդ խաղերին տրամադրվող ժամերի աճին զուգահեռ նվազում են աշակերտների առաջադիմության միջին միավորները, և 2 ժամից ավելի համակարգչային խաղերին տրամադրողների ցուցանիշը (5.28) նշանակալիորեն ցածր է աշակերտների մյուս խմբերի ցուցանիշներից, բացի հարցաթերթի տվյալ հարցին չպատասխանողների ցուցանիշից (տե՛ս աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Ստուգատեսի մասնակիցների հայոց պատմության միջին միավորները և տոկոսները ըստ համակարգչի առջև ծախսված ժամանակի և նպատակային կիրառման										
Ժամեր / համակարգչի նպատակային կիրառում	**բոլորովին ժամանակ չեն ծախսում**		**մինչև 1 ժամ**		**1-2 ժամ**		**2 ժամից ավելի**		**չեն պատասխանել**	
	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը
Գիտահանրամատչելի նյութեր կարդալու	25%	5.37	46%	5.74	14%	**5.83**	6%	5.82	9%	5.02
Խաղալու	29%	**5.83**	26%	5.66	17%	5.54		5.44	8%	5.03

Նմանատիպ արդյունք դրսևորվել է նաև հայոց պատմության առաջադիմության ցուցանիշները դիտարկելիս: Համակարգչի առջև բոլորովին ժամանակ չծախսող աշակերտների միջին միավորը (5.83) նշանակալիորեն բարձր է և՛ 1-2 ժամ (5.54), և՛ 2 ժամից ավելի ծախսողների առաջադիմության (5.44) միջին միավորներից: 2 ժամից ավելի խաղերի համար համակարգչի առջև անցկացնողների հայոց պատմության միջին միավորը նշանակալիորեն ցածր է և՛ դրան ժամանակ չտրամադրողների, և՛ մինչև 1 ժամ տրամադրող աշակերտների միջին միավորներից (տե՛ս աղյուսակ 13):

Դիտարկվել է համակարգչի առջև 8-րդ դասարանցիների անցկացրած օրական ժամանակի և նպատակային կիրառման պատկերը ըստ աշակերտի սեռերի:

Ա Տնային առաջադրանքների կատարում

Դիագրամ 16



Մեծ թվով աշակերտներ տնային առաջադրանքների կատարմանը մինչև 1 ժամ են տրամադրում, ընդ որում, աղջիկների թիվը մի փոքր մեծ է:

Բ. Ֆիլմերի դիտում

Դիագրամ 17



Դիագրամ 17-ից երևում է, որ մինչև 1 ժամ ֆիլմեր դիտող աշակերտների շրջանում ավելի շատ են աղջիկները, իսկ 2 ժամ և ավելի ֆիլմեր դիտողների մեջ գերիշխում են տղաները:

Գ. Գիտահանրամատչելի նյութերի ընթերցում

Դիագրամ 18



Ինչպես նկատում ենք դիագրամ 18-ում, մինչև 1 ժամ գիտահանրամատչելի նյութեր կարդալու համար համակարգչից օգտվող աշակերտները կազմում են ամենամեծ խումբը, ընդ որում, այս խմբում աղջիկները գերիշխում են:

Դիագրամ 19 ա



Դիագրամ 19 բ



Վերևում ներկայացված է համակարգչի առջև գիտահանրամատչելի նյութեր կարդալու համար ծախսած ժամանակի և աշակերտների հայոց լեզու և հայ գրականության և հայոց պատմության միջին միավորների կապը: Ինչպես նկատում ենք, երկու դեպքում էլ ամենամեծ միջին միավորները օրական 1-2 ժամ գիտահանրամատչելի նյութեր կարդացողներինն են (տե՛ս դիագրամ 19 ա, բ):

Դ. Խաղեր

Դիագրամ 20



Համակարգչային խաղերի վրա բոլորովին ժամանակ չծախսող և մինչև 1 ժամ ծախսողների խմբերում նորից ավելի մեծ է աղջիկների թիվը, իսկ 1-2 ժամ և 2 ժամ և ավելի աշակերտների խմբերում մեծ է տղաների թիվը:

Դիագրամ 21 ա, բ-ում նկատում ենք, որ համակարգչային խաղերի վրա բոլորովին ժամանակ չծախսողների միջին միավորները ամենաբարձր են և՛ հայոց լեզու և հայ գրականությունից, և՛ հայոց պատմությունից: Նկատում ենք նաև, որ ժամերի ավելացմանը զուգահեռ նվազում են աշակերտների առաջադիմության միջին միավորները, և ամենացածր միջին միավորը օրական 2 ժամ և ավելի ծախսողներինն է:

Դիագրամ 21 ա, բ





3.5 Աշակերտների կարդացած գեղարվեստական գրքերը

Դիագրամ 22



Ուսումնասիրվել է աշակերտների պատասխանները իրենց կարդացած վերջին գեղարվեստական գրքերի վերաբերյալ: Դիագրամ 22-ում երևում է, որ աշակերտների 24%-ը ընթերցում է գրքեր դպրոցական ծրագրից դուրս, քանի որ իրենց պատասխաններում նշել են այնպիսի հեղինակների գործեր, որոնց ստեղծագործությունները դուրս են դպրոցական ծրագրի շրջանակներից, իսկ աշակերտների 18%-ը ընթերցում է դպրոցական ծրագրով նախատեսված գրքեր, քանի որ նշել են հենց այդ գրքերը: Աշակերտների 8%-ը մասնակի տեղեկացված է, քանի որ նրանց պատասխաններում զգացվում է, որ նրանք իրազեկված են այս կամ այն ստեղծագործության մասին, սակայն պատասխանը թերի է, հավանաբար, այդ ստեղծագործության մասին նրանք լսել են, ֆիլմեր կամ մուլտֆիլմեր են դիտել: Ցավոք, արձանագրվել է նաև, որ աշակերտների 50%-ը չի նշել որևէ պատասխան իր կարդացած վերջին գեղարվեստական գրքի մասին, ինչը վկայում է, որ մեր օրերում 8-րդ դասարանցիները առանձնապես չեն սիրում գեղարվեստական գրքեր կարդալ:

Դիտարկենք վերոնշյալ աշակերտների խմբերում հայրենագիտական առարկաներից միջին միավորների համադրությունները:

Ուսումնասիրվող երկու առարկաների դեպքում էլ որևէ գեղարվեստական գրքի մասին հարցաթերթում պատասխան չնշողների միջին միավորները նշանակալիորեն ցածր են մնացած բոլոր խմբերում աշակերտների միջին միավորներից:

Դիագրամ 23



Դիագրամ 23–ից նկատում ենք, որ այն աշակերտները, որոնք ընթերցում են գրքեր դպրոցական ծրագրից դուրս հայոց պատմությունից ցուցաբերում են

նշանակալիորեն բարձր առաջադիմության միջին միավոր (6.03), որը բարձր է և՛ դպրոցական ծրագրի շրջանակներում առկա գրքեր ընթերցողների (5.80), և՛ մասնակի տեղեկացվածների (5.74), և՛ իրենց կարդացած վերջին գեղարվեստական գրքի մասին ոչինչ չնշողների (5.29) միջին միավորներից:

Ըստ աշակերտների սեռերի

Դիտարկվել է դիագրամ 23-ում նշված ամենաբարձր առաջադիմություն ունեցող (ընթերցում է գրքեր դպրոցական ծրագրից դուրս), և ամենացածր առաջադիմություն ունեցող (կարդացած վերջին գեղարվեստական գրքի մասին ոչինչ չնշող) աշակերտների խմբերը ըստ սեռերի: Այն աշակերտների շրջանում, որոնք ընթերցում են դպրոցական ծրագրից դուրս մեծ թիվը կազմում են աղջիկները (61%-ը աղջիկ, 39%-ը տղա), իսկ ոչինչ չնշողների շրջանում՝ տղաները (59%-ը տղա, 41%-ը աղջիկ):

Դիագրամ 24 ա,բ

Ընթերցասեր է դպրոցական ծրագրից դուրս



Ոչինչ չեն նշել



Ուսումնասիրելով աշակերտների կարդացած վերջին գեղարվեստական գրքի վերաբերյալ պատասխանների ցանկը՝ ներկայացնում ենք 8-րդ դասարանցիների շրջանում դպրոցական ծրագրից դուրս ավելի շատ ընթերցվող գեղարվեստական գրքերի հնգյակը.

- ✓ *Վարդգես Պետրոսյան, «Ապրած և չապրած տարիներ»,*
- ✓ *Վախթանգ Անանյան, «Հովազաձորի գերիները»,*
- ✓ *Ժյուլ Վեռն, «Տասնհինգամյան նավապետը»,*
- ✓ *Էդգար Հարությունյան, «Չգտնված երիցուկներ»,*
- ✓ *Ստեփան Զորյան, «Մի կյանքի պատմություն»:*

Որպես հիշեցում, նշում ենք, որ աշակերտների միայն 24%-ն է կարդում գեղարվեստական գրքեր դպրոցական ծրագրից դուրս (տե՛ս էջ 43):

3.6 Աշակերտների կարդացած պատմական վեպերը

Դիագրամ 25



Դիագրամ 25-ում նկատելի է, որ աշակերտների մեծ խումբը սիրում է կարդալ պատմական վեպեր: Անշուշտ, պատմական վեպեր ընթերցելու նախասիրությունը դրականորեն պետք է անդրադառնա աշակերտների միջին միավորները ցուցանիշների վրա: Դիագրամ 26-ում պարզ երևում է, որ պատմական վեպեր ընթերցող աշակերտների միջին միավորը նշանակալիորները բարձր է և՛ վեպեր չկարդացողների, և՛ այդ հարցին չպատասխանողների միջին միավորներից:

Դիագրամ 26



3.7 Հայոց լեզվի բաժինների իմացության աշակերտների ինքնագնահատումը

Աշակերտները հարցաթերթում գնահատելեն իրենց գիտելիքները հայոց լեզվի որոշ բաժինների (ուղղագրություն, կետադրություն, բառագիտություն, խոսքի մասեր և նախադասության անդամներ) վերաբերյալ: Ստորև ներկայացվում է 8-րդ դասարանի աշակերտներիհայոց լեզվից վերոնշյալ բաժինների վերաբերյալ ինքնագնահատման արդյունքները և աշակերտների՝ ստուգատեսում արձանագրած միջին միավորները:

Աղյուսակ 14

Ստուգատեսին հայոց լեզվից միջին միավորները և առարկայի ծրագրային որոշ բաժինների իմացության աշակերտների ինքնագնահատումը

Ինքնագնահատման խմբերը / Հայոց լեզվի բաժիններ	Գերազանց		Լավ		Բավարար		Վատ		Չեն պատասխանել	
	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը
Ուղղագրություն	13%	6.12	45%	5.83	30%	5.22	10%	4.91	2%	4.92
Կետադրություն	7%	5.92	44%	5.86	35%	5.38	3%	5.02	11%	4.94
Բառագիտություն	14%	5.98	44%	5.83	27%	5.29	3%	4.78	12%	4.95
Խոսքի մասեր	16%	6.17	39%	5.77	30%	5.31	4%	5.11	11%	4.92
Նախադասության անդամներ	23%	6.02	37%	5.77	25%	5.24	3%	5.00	12%	4.93

Աղյուսակ 14-ում նկատում ենք, որ ամենաբարձր միջին միավորները իրենց գիտելիքները գերազանց գնահատողներինն են, որոնք կազմում են ուսումնասիրվող աշակերտների 7-23%-ը: Հայոց լեզվի վերոնշյալ բոլոր բաժինների վերաբերյալ

գիտելիքների ինքնագնահատման աղյուսակում տեսնում ենք, որ իրոք այն աշակերտների խմբերում են ամրագրվել ավելի բարձր միջին միավորները, որոնք ունեն ավելի բարձր ինքնագնահատում: Ե՛վ բավարար, և՛ վատ ինքնագնահատմամբ աշակերտների խմբերում առաջադիմության միջին միավորները նշանակալիորեն ցածր են և՛ գերազանց, և՛ լավ ինքնագնահատմամբ աշակերտների խմբերում ամրագրված միջին միավորներից: «Ուղղագրություն», «Խոսքի մասեր» և «Նախադասության անդամներ» բաժինների վերաբերյալ աշակերտների կողմից իրենց գիտելիքները գերազանց գնահատողները ստուգատեսում ցուցաբերել են ամենաբարձր միջին միավորները, որոնք նշանակալիորեն բարձր են բոլոր մյուս ինքնագնահատման խմբերում աշակերտների առաջադիմության միջին միավորներից: Աղյուսակ 14-ում նշված հայոց լեզվի բոլոր բաժինների վերաբերյալ աշակերտների խմբերում բավարար և վատ ինքնագնահատմամբ հանդես եկած աշակերտների միջին միավորները նշանակալիորեն ցածր են իրենց գիտելիքների վերաբերյալ և՛ գերազանց, և՛ լավ ինքնագնահատմամբ հանդես եկածների միջին ցուցանիշներից:

3.8 Հայոց պատմության բաժինների իմացության աշակերտների ինքնագնահատումը

Կապելով աշակերտների հայոց պատմության որոշ բաժինների իմացության ինքնագնահատումը ստուգատեսի ժամանակ հայոց պատմությունից նրանց ցուցաբերած առաջադիմության ցուցանիշների հետ ստանում ենք հետևյալ պատկերը. հայոց պատմության երեք՝ «Հին շրջան», «Միջնադար» և «Նոր շրջան» բաժինների վերաբերյալ ամենաբարձր ինքնագնահատում ունեցող աշակերտները իրոք ստուգատեսում ցուցաբերել են ամենաբարձր միջին միավորները և այս ցուցանիշները եղել են վիճակագրորեն նշանակալի բարձր մյուս բոլոր աստիճանների ինքնագնահատմամբ հանդես եկած աշակերտների միջին ցուցանիշներից:

Աղյուսակ 15

Ստուգատեսին մասնակցած աշակերտների՝ հայոց պատմությունից միջին միավորները և որոշ բաժինների իմացության աշակերտների ինքնագնահատումը

Ինքնագնահատման խմբերը / Պատմության բաժիններ	Գերազանց		Լավ		Բավարար		Վատ		Չեն պատասխանել	
	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը	%	միջին միավորը
Հին շրջան	10%	**6.08**	38%	**5.88**	36%	5.34	4%	5.18	12%	5.21
Միջնադար	7%	**6.14**	41%	5.86	34%	5.34	3%	5.04	13%	5.20
Նոր շրջան	17%	**6.02**	41%	5.82	26%	5.24	3%	4.95	14%	5.20

Բոլոր երեք բաժինների իմացության վերաբերյալ աշակերտների և՛ բավարար, և՛ վատ ինքնագնահատմամբ հանդես եկած խմբերում աշակերտների միջին միավորները նշանակալիորեն ցածր են և՛ գերազանց, և՛ լավ ինքնագնահատմամբ խմբերում աշակերտների միջին ցուցանիշներից:

Մասնավորապես, «Միջնադար» բաժնի վերաբերյալ աշակերտների գերազանց ինքնագնահատմամբ խումբն ունի ամենաբարձր միջին միավորը (6.14), այն նշանակալիորեն բարձր է և՛ լավ (5.86), և՛ բավարար (5.34), և՛ վատ (5.04) ինքնագնահատմամբ, և՛ այդ հարցին չպատասխանած (5.20) աշակերտների միջին ցուցանիշներից (տե՛ս աղյուսակ 15):

4. Որոշ գործոնների վերլուծություն

4.1 Հայոց լեզուն և հայ գրականությունը դպրոցում

Հարցաթերթի մի խումբ հարցեր միտված են եղել ուսումնասիրելու հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդմանը վերաբերող աշակերտների կարծիքները:

Այդ նպատակով կատարվել է գործոնների վերլուծություն՝ գլխավոր բաղադրիչի եղանակով, որի ժամանակ առանձնացվում են հինգ հիմնական գործոններ, որոնք ստացվում են հարցաթերթում ընդգրկված՝ թվով ավելի շատ հարցերի պատասխանների մշակման և խմբավորման ժամանակ: Ստորև ներկայացվող գլխավոր գործոնները նշանակալի ազդեցություն ունենստուգատեսի ժամանակ աշակերտների՝ հայոց լեզու և հայ գրականությունից դրսևորած ցուցանիշների վրա:

Գլխավոր գործոնները (տե՛ս հավելված 1).

- ***Աշակերտների վերաբերմունքն «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներին և ինքնագնահատումը,***
- ***Ինտեգրվածությունը (ներգրավվածությունը) դպրոցում, հասակակիցների հետ հարաբերությունները,***
- ***Ծնողի ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական գործընթացում,***
- ***Չինտեգրված աշակերտների շփման և հաղորդակցման խնդիրները,***
- ***Առարկաների բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողությունը:***

Գծային ռեգրեսիայի եղանակով գնահատվել է նաև գլխավոր գործոնների ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա: Առաջարկվող գծային մոդելը 15%-ով նկարագրում է ազգային ստուգատեսի ժամանակ աշակերտների հայոց լեզու և հայ գրականության առաջադրանքների ճիշտ պատասխաններով ձևավորված

ցուցանիշները (R^2_{adj}=0.15) (տե՛ս ստորև ներկայացված բանաձևը): Բանաձևում բաղադրիչ գործոնների թվային գործակիցները հանդես են գալիս որպես քննարկված գործոնների կշիռներ, իսկ թվի առջև դրված նշանը բացատրում է այդ գործոնի ազդեցության ուղղությունը՝ դրական կամ բացասական:

$Y_{\text{հայոց լեզու և հայ գրականություն}} = 4.83 + 1.22*$ ***Աշակերտների վերաբերմունքն «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներին և ինքնագնահատումը*** **+**
+0.29* ***Ինտեգրվածությունը դպրոցում, հասակակիցների հետ հարաբերությունները***
– 1.21* ***Առարկաների բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողությունը +ε***

Վերոնշյալ բանաձևում ներկացացված են այն երեք գործոնները, որոնց կշիռները վիճակագրորեն նշանակալի են: ε-ը առաջարկված մոդելի սխալն է:

- Այսպիսով, սովորողների հայոց լեզու և հայ գրականության ցուցանիշների վրա զգալիորեն մեծ և դրական է այդ առարկաների նկատմամբ *աշակերտների վերաբերմունքի և ինքնագնահատման ազդեցությունը:* Խիստ բացասաբար է ազդում *առարկայի բարդության և ինքնուրույն դասապատրաստման կարողության* գործոնը:
- Միջին դրական ազդեցություն ունի *դպրոցում ինտեգրվածության և հասակակիցների հետ հարաբերությունների* գործոնները:

4.2 Հայոց պատմությունը դպրոցում

Հարցաթերթի մի խումբ հարցեր միտված են եղել ուսումնասիրելու հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդմանը վերաբերող աշակերտների կարծիքները:

Կիրառվել է գործոնների վերլուծություն՝ գլխավոր բաղադրիչի եղանակով, որի արդյունքում առանձնացվել են չորս գլխավոր գործոններ:

Գլխավոր գործոններ (տե՛ս հավելված 2).

- ***Աշակերտների վերաբերմունքը հայոց պատմությանը և ինքնագնահատումը,***
- ***Դպրոց-աշակերտներ-ծնողներ փոխհարաբերությունները,***
- ***Չինտեգրված աշակերտների շփման և հաղորդակցման խնդիրները,***
- ***Առարկայի բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողությունը:***

Վերոնշյալ գործոնների ազդեցությունը հայոց պատմությանից աշակերտների ցուցանիշի վրա գնահատելու համար կատարվել է գծային ռեգրեսիայի վերլուծություն՝ բազմակի գծային ռեգրեսիայի եղանակով: Առաջարկվող գծային մոդելը բնութագրում է հայոց պատմությանից աշակերտների ստուգատեսի ժամանակ դրսևորած ցուցանիշները 9%-ով (R^2_{adj}=0.09) (տե՛ս ստորև ներկայացված բանաձևը):

$$\boldsymbol{Y}_{\text{հայոց պատմություն}} = \mathbf{4.57} + \mathbf{0.60}^{*}\textit{Աշակերտների վերաբերմունքն հայոց պատմությանը և ինքնագնահատումը} + \mathbf{0.68}^{*}\textit{Դպրոց-աշակերտներ-ծնողներ փոխհարաբերությունները} - \mathbf{0.82}^{*}\textit{Առարկայի բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողությունը} + \boldsymbol{\varepsilon}$$

Հարկավոր է նշել, որ բոլոր երեք գործոնները զգալի ազդեցություն ունեն հայոց պատմությանից աշակերտների ցուցանիշների վրա.

- Զգալի մեծ, սակայն բացասական ազդեցություն ունի *առարկայի բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողություն* գործոնը:
- Միջին ուժգնության դրական ազդեցություն ունեն *աշակերտների վերաբերմունքը հայոց պատմություն առարկային և ինքնագնահատումը* և *դպրոց-աշակերտներ-ծնողներ փոխհարաբերությունները* գործոնները:

Եզրակացություն

- ✓ Հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ աշակերտների առաջադիմության միջին միավորները հայոց լեզու և հայ գրականությունից (5.57), և հայոց պատմությունից (5.60) շատ մոտ են և գրեթե համընկնում են գնահատման 10 միավորանոց սանդղակում նորմալ բաշխվածության դեպքում նորմալ համարվող 5.50 միջին ցուցանիշին:

- ✓ Թեստային առաջադրանքները եղել են միջին բարդության, և հնարավոր է աշակերտների կարողությունները տարբերակել ըստ իրենց առաջադիմության ցուցանիշների:

- ✓ Ստուգատեսի արդյունքները հայոց լեզու և հայ գրականությունից Տավուշի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Լոռու մարզերում եղել են բարձր ուսումնասիրության ժամանակ հանրապետական միջին միավորից (5.57), իսկ հայոց պատմության պարագայում Կոտայքի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում են միջին միավորները բարձր եղել հանրապետական միջին միավորից (5.60):

- ✓ Ինչպես և ակնկալվում էր, ստուգատեսի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ 8-րդ դասարանում դեռևս զգալի թվով աշակերտներ կողմնորոշված չեն ապագա մասնագիտության ընտրության հարցում, մի մեծ խումբ աշակերտներ էլ ունեն երկու մասնագիտության նկատմամբ հետաքրքրություն, որը նորից ապացուցում է, որ աշակերտները դեռևս վերջնականապես չեն կողմնորոշվել իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում: Առավել շատ աշակերտներ նախընտրել են բժիշկի, սպորտսմենի, ծրագրավորողի, իրավաբանի և բիզնեսմենի մասնագիտությունները:

- ✓ Հետաքրքիր էր արձանագրել, որ աշակերտների ամենամեծ խմբի համար հանրակրթական առարկաների շարքում «Մաթեմատիկա» առարկան է ամենասիրածը, այնուհետև «Կենսաբանությունը» և «Հայ գրականությունը»:

- ✓ Աշակերտները օգտակար տեղեկություններ հիմնականում ստանում են դասագրքերից և համակարգչից: Ուսումնասիրվել է աշակերտների առաջադիմության ցուցանիշները ըստ օգտակար տեղեկություն ստանալու հիմնական աղբյուրների, և պարզվել է, որ հայոց լեզու և հայ գրականության միջին միավորներն ամենաբարձրն են գրքերից և ամսագրերից տեղեկություններ ստացող աշակերտների շրջանում՝ ի տարբերություն մյուս բոլոր միջոցներից օգտակար տեղեկություններ ստացողների: Դիտարկվել է նաև օգտակար տեղեկություն ստանալու հիմնական աղբյուրները ըստ

աշակերտների բնակության վայրի տիպերի: Մեծ և միջին քաղաքներում աշակերտները հիմնականում օգտակար տեղեկությունները ստանում են համակարգչից, իսկ փոքր քաղաքներում և գյուղական բնակավայրերում՝ դասագրքերից: Պարզվել է, որ բոլոր տիպի բնակավայրերի դեպքում էլ այն աշակերտները, ովքեր օգտակար տեղեկությունը ստացել են հեռուստացույցից ցուցաբերել են առաջադիմության ամենացածր միջին միավորները մյուս աղբյուրներից տեղեկություն ստացողների միջին միավորների նկատմամբ:

- ✓ Ելնելով մեր օրերում համակարգչի օգտագործման և դրա համար ծախսվող օրական ժամաքանակի աշակերտների առաջադիմության վրա ունեցած ազդեցության ուսումասիրության արդյունքերից, կարծում ենք, որ հարկավոր է վերահսկել և՛ տարբեր նպատակով համակարգչի առջև աշակերտների ծախսած ժամերը, և՛ այն նպատակը, որի համար աշակերտները նստում են համակարգչի առջև՝ նվազագույնի հասցնելով աշակերտների՝ խաղերի վրա ծախսած ժամանակը և խրախուսելով համակարգչով գիտահանրամատչելի նյութերի ընթերցումը:

- ✓ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընթերցասեր (դպրոցական ծրագրից դուրս գեղարվեստական գրքեր կարդացող) աշակերտների առաջադիմության միջին միավորները ամենաբարձրն են, սակայն այդ աշակերտները կազմում են ուսումնասիրված աշակերտների երկրորդ մեծ խումբը՝ 24%-ը, իսկ ամենամեծ խումբը՝ 50%-ը, որևէ գրառում չէր արել իր կարդացած վերջին գեղարվեստական գրքի վերաբերյալ, երրորդ խումբ կազմում են այն աշակերտները, որոնք ընթերցում են գրքեր դպրոցական ծրագրի շրջանակներում, իսկ ամենափոքր խումբ կազմում են մասնակի տեղեկացված աշակերտները, որոնք չեն ընթերցում, այլ ծանոթ են որոշ ստեղծագործությունների ֆիլմեր, մուլտֆիլմեր դիտելու կամ իրենց շրջապատում այդ մասին որևէ մեկից լսելու շնորհիվ: Պարզվել է նաև, որ ընթերցասերների մեծ մասը աղջիկներ են, իսկ ոչինչ չնշողներից շատերը՝ տղաներ:

- ✓ Աշակերտների ամենամեծ խումբը սիրում է կարդալ պատմական վեպեր: Պատմական վեպեր ընթերցող աշակերտների ստուգատեսի ցուցանիշները բարձր են մյուս բոլոր աշակերտների ցուցանիշներից:

- ✓ Աշակերտների ինքնագնահատումը «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաների որոշ բաժինների իմացության վերաբերյալ հստակ բաժանում է նրանց՝ ըստ ստուգատեսի ցուցանիշների: Ամենաբարձր միջին միավորները ցուցաբերել են իրենց իմացությունները գերազանց գնահատողները: Այդ միավորները նշանակալիորեն բարձր են մյուս բոլոր աստիճանների

ինքնագնահատմամբ հանդես եկած աշակերտների միջին միավորներից: Բավարար և վատ ինքնագնահատմամբ հանդես եկածների միջին ցուցանիշները նշանակալիորեն ցածր են և՛ գերազանց, և՛ լավ ինքնագնահատմամբ հանդես եկացածների միջին ցուցանիշներից:

- ✓ Դպրոցներում «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման վերաբերյալ աշակերտների կարծիքը ուսումնասիրելու համար կատարվել է գլխավոր հինգ գործոնների վերլուծություն՝ *աշակերտների վերաբերմունքը հայոց լեզվին և հայ գրականությանը և ինքնագնահատումը, ինտեգրվածությունը դպրոցում, հասակակիցների հետ հարաբերությունները, ծնողի ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական գործընթացում, չինտեգրված աշակերտների շփման և հաղորդակցման խնդիրները,* և *առարկայի բարդությունն և ինքնուրույն դասապատրաստման կարողությունը:* Գնահատվել է վերոնշյալ գործոնների ազդեցության ուժգնությունը և ուղղությունը:

- ✓ Դպրոցներում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման վերաբերյալ աշակերտների կարծիքը ուսումնասիրելու համար իրականացվել է գլխավոր գործոնների վերլուծություն՝ *աշակերտների վերաբերմունքը «Հայոց պատմություն» առարկային և ինքնագնահատումը, դպրոց-աշակերտներ–ծնողներ փոխհարաբերությունները, չինտեգրված աշակերտների շփման և հաղորդակցման խնդիրները, և առարկայի բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողությունը:* Գնահատվել է վերոնշյալ գործոնների ազդեցության ուժգնությունը և ուղղությունը:

Կարծում ենք, որ աշակերտների առաջադիմության կանխատեսման հուսալի մոդել ունենալու համար հարկավոր է ընդլայնել աշակերտների առաջադիմության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը:

Գրականություն

1. «Տվյալների վերլուծություն SPSS ծրագրային փաթեթի միջոցով». մեթոդաբանական դասընթաց, http://www.crrc.am/news-events/599-«Տվյալների-վերլուծություն-SPSS-ծրագրային-փաթեթի-միջոցով».-մեթոդաբանական-դասընթաց?lang=hy
2. 2018 թվականի մարտ-մայիս ամիսներին իրականացրած հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի ուսումնասիրությունների ԳԹԿ բազաներ

Հավելված 1

«Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաները դպրոցում գործոնների վերլուծություն			
Գործոններ	**Հարցաթերթ**		**Կորելացիայի գործակից**
Աշակերտների վերաբերմունքը «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաներին և ինքնագնահատումը	Ինչպե՞ս ես տիրապետում հայոց լեզվի հետևյալ բաժիններին	Ուղղագրություն	**0.802**
		Նախադասության անդամներ	**0.797**
		Բառագիտություն	**0.785**
	Գրականության ինչպիսի՞ նյութ ես առավել հեշտ յուրացնում	Արձակ ստեղծագործություն կարդալ	**0.760**
		Կարողանալ վերլուծել ստեղծագործության գաղափարը և բնութագրել կերպարներին	**0.731**
		Բանաստեղծություն անգիր սովորել	**0.651**
	Որքանո՞վ ես համամիտ ձեր հայոց լեզվի դասերի վերաբերյալ հետևյալ պնդումներին	Իմ ուսուցիչը հետաքրքիր հանձնարարություններ է տալիս	**0.666**
		Մեր դասարանի աշակերտները հայոց լեզվի դասին անկաշկանդ մասնակցություն են ցուցաբերում	**0.570**
	Որքանո՞վ ես համամիտ հայոց լեզու սովորելու վերաբերյալ հետևյալ պնդումներին	Ես հաճույքով եմ հայոց լեզու սովորում	**0.663**
		Հայոց լեզու իմանալը կարևոր է	**0.625**
Ինտեգրվածությունը դպրոցում, հասակակիցների հետ հարաբերությունները	Որքանո՞վ ես համամիտ ձեր դպրոցի վերաբերյալ հետևյալ պնդումներին	Դպրոցը օգնում է աշակերտին դառնալ ինքնուրույն	**0.699**
		Ես սիրում եմ լինել դպրոցում	**0.698**
	Ի՞նչ կարծիք ունես ձեր դպրոցի ուսուցիչների և աշակերտների մասին: Որքանո՞վ ես համամիտ հետևյալ պնդմանը	Մեր դպրոցի ուսուցիչները հավասարապես հոգատար են բոլոր աշակերտների նկատմամբ	**0.589**
Ծնողի ներգրավվածությունը ուսումնադաս-տիարակչական գործընթացում	Որքանո՞վ ես համամիտ հետևյալ պնդումներին	Ծնողներս օգնում են ինձ՝ կատարելու տնային առաջադրանքներս հայոց լեզվից	**0.819**
		Ծնողներս համոզվում են, որ ես կատարում եմ տնային աշխատանքներս	**0.524**
		Ծնողներս հետաքրքրված են, թե ինչ սովորեցի դպրոցում	**0.517**

Շփման և հաղորդակցման հմտությունները չինտեգրված աշակերտների մոտ	Այս տարվա ընթացքում հետևյալներից որո՞նք են պատահել քեզ հետ դպրոցում	Մյուս աշակերտներն ինձ ստիպում են անել բաներ, որոնք ես չէի ուզում անել	0.733
		Մյուս աշակերտներն ինձ հեռացրել են խաղերից կամ այլ զբաղմունքներից	0.707
		Երբեմն ես վիճել եմ ուսուցիչների հետ	0.685
	Ի՞նչ կարծիք ունես ձեր դպրոցի ուսուցիչների և աշակերտների մասին: Որքանո՞վ ես համամիտ հետևյալ պնդմանը	Մեր դասարանի աշակերտները չեն սիրում սովորել	0.601
Առարկայի բարդությունը և ինքնուրույն դասապատրաստման կարողությունը	Որքանո՞վ ես համամիտ ձեր հայոց լեզվի դասերի վերաբերյալ հետևյալ պնդմանը	Հայոց լեզվի դասը պատրաստելիս ես օգնության կարիք եմ զգում	0.705
	Որքանո՞վ ես համամիտ հայոց լեզու սովորելու վերաբերյալ հետևյալ պնդմանը	Հայոց լեզու չեմ սիրում, որովհետև բարդ է	0.650

Հավելված 2

‹‹Հայոց պատմություն›› առարկան դպրոցում գործոնների վերլուծություն			
Գործոններ	**Հարցաթերթ**		**Կորելացիայի գործակից**
Աշակերտների վերաբերմունքն առարկային և ինքնագնահատումը	Որքանո՞վ ես համամիտ հայոց պատմություն սովորելու վերաբերյալ հետևյալ պնդումներին	Ես հաճույքով եմ հայոց պատմություն սովորում	0.792
		Հայոց պատմություն իմանալը կարևոր է	0.738
	Որքանո՞վ ես համամիտ հայոց պատմության դասերի վերաբերյալ հետևյալ պնդումներին	Մեր հայոց պատմության ուսուցիչը հասկանալի է բացատրում դասը	0.789
		Ինձ հետաքրքիր է իմ ուսուցչի պատմածը	0.783
		Մեր դասարանի աշակերտները հայոց պատմության դասին անկաշկանդ մասնակցություն են ցուցաբերում	0.671
		Իմ ուսուցիչը հետաքրքիր հանձնարարություններ է տալիս	0.780
	Որքա՞ն լավ ես տիրապետում հայոց պատմության հետևյալ բաժիններին	Նոր շրջան	0.786
		Հին շրջան	0.776
	Հայոց պատմությունից ի՞նչն է քեզ համար ավելի հեշտ	Իմանալ պատմական անձանց կյանքն ու գործունեությունը	0.783
		Հիշել տարեթվերը	0.734
		Շարադրել պատմական իրադարձությունները	0.779

Դպրոց- աշակերտներ-ծնողներ փոխհարաբերությունները	Որքանո՞վ եք համամիտ ձեր դպրոցի վերաբերյալ հետևյալ պնդումներին	Դպրոցը օգնում է աշակերտին դառնալ ինքնուրույն	0.721
		Ես սիրում եմ լինել դպրոցում	0.673
	Ի՞նչ կարծիք ունեք ձեր դպրոցի ուսուցիչների և աշակերտների մասին: Որքանո՞վ եք համամիտ հետևյալ պնդմանը	Մեր դպրոցի ուսուցիչները հավասարապես հոգատար են բոլոր աշակերտների նկատմամբ	0.653
	Այս տարվա ընթացքում հետևյալներից որո՞նք են պատահել քեզ հետ դպրոցում	Անհրաժեշտության դեպքում մյուս աշակերտները օգնել են ինձ	0.624
		Մյուս աշակերտները ինձ դիմել են օգնության համար	0.588
	Որքանո՞վ եք համամիտ հետևյալ պնդումներին	Ծնողներս հետաքրքրվում են, թե ինչ սովորեցի դպրոցում	0.617
		Ծնողներս համոզվում են, որ ես կատարում եմ տնային աշխատանքներս	0.563
		Ես խոսում եմ ծնողներիս հետ դպրոցական կյանքի մասին	0.526
Չինսեզրված աշակերտների շփման և հարգանքի խնդիրները	Այս տարվա ընթացքում հետևյալներից որո՞նք են պատահել քեզ հետ դպրոցում	Մյուս աշակերտները ինձ ստիպել են անել բաներ, որոնք ես չէի ուզում անել	0.744
		Մյուս աշակերտները ինձ հեռացրել են խաղերից կամ այլ զբաղմունքներից	0.717
		Երբեմն ես վիճել եմ ուսուցիչների հետ	0.686
	Ի՞նչ կարծիք ունեք ձեր դպրոցի ուսուցիչների և աշակերտների մասին: Որքանո՞վ եք համամիտ հետևյալ պնդմանը	Մեր դասարանի աշակերտները չեն սիրում սովորել	0.568
Առարկայի բարդությունն ու ինքնուրույն դասապատրաստման կարողությունը	Որքանո՞վ եք համամիտ հետևյալ պնդումներին	Ծնողներս օգնում են ինձ կատարել տնային առաջադրանքները հայոց պատմությունից	0.839
	Որքանո՞վ եք համամիտ հայոց պատմության սովորելու վերաբերյալ հետևյալ պնդումներին	Հայոց պատմության դասը պատրաստելիս ես օգնության կարիք եմ զգում	0.73
		Հայոց պատմություն չեմ սովորում, որովհետև բարդ է	0.707